

## **Առաջին անգամ հայերենով ԵԱՀԿ մոդելում քննարկվում են բնապահպանական խնդիրներ**

Երբ 2009թ. մայիսի 8-ի առավոտյան Հայաստանում առաջին անգամ հայերենով անցկացվող ԵԱՀԿ մոդելի կազմակերպիչները համաժողովի բացման համար ժամանեցին Գյումրի, քաղաքը դեռ քնած էր: Սակայն Շիրակի մարզի 35 մասնակից երիտասարդ դեսպաններն արդեն արթուն էին և պատրաստ պաշտպանելու «իրենց» երկրների շահերը երկօրյա ԵԱՀԿ մշտական խորհրդի բանակցությունների սիմուլյացիայի ընթացքում:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից կազմակերպած այս միջոցառումը հաջորդում է նախորդ տարի նոյեմբերին Ծաղկաձորում տեղի ունեցած ԵԱՀԿ մոդելին, որի աշխատանքային լեզուներն անգլերենն էր: Միջազգային դիվանագիտության մասին սովորելու ցանկություն ունեցող երիտասարդների լայն շրջանակներ ներգրավելը համաժողովի կազմակերպման առաջնահերթ նպատակներից էր: Այդ իսկ պատճառով տրամաբանական էր, որ Գյումրի՝ Հայաստանի երկրորդ ամենամեծ քաղաքն ու մշակութային մայրաքաղաքը, ընտրվեց որպես անցկացման վայր:

Այս տարվա խաղի ժամանակ ուշադրության կենտրոնում էին գտնվում հորինված հարևան երկրների՝ Աբրալայի, Բալկոնիայի և Դակայի միջև լարված հարաբերությունները՝ ջրային ռեսուրսների կառավարման, տարածքային վեճի և Ակուզ գետի աղտոտման խնդիրների հետ կապված: Մշտական խորհրդի սիմուլյացիոն միստի ընթացքում վարվող բանակցությունները 16-25 տարեկան մասնակիցներին հնարավորություն տվեցին լուծումներ գտնել անվտանգության իրական մարտահրավերներին և խորացնել իրենց գիտելիքները ԵԱՀԿ-ի՝ որպես համապարփակ անվտանգության դերակատարի մասին:

### **Խաղարկային բանակցությունները արտացոլում են իրականությունը**

Համաժողովի բացմանը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինոսն ասաց. «Ես կարծում եմ, որ այսօրվա քննարկումը ոչ միայն կխորացնի մասնակիցների գիտելիքները ԵԱՀԿ-ի և տնտեսական ու բնապահպանական բնագավառում գոյություն ունեցող խնդիրների ոլորտում, այլ նաև հնարավորություն կընձեռի զարգացնել բանակցելու, երկխոսության մեջ մտնելու,

փոխզիջումների գնալու և կոնսենսուսի հասնելու իրենց ունակությունները, որոնք շատ կարևոր ու օգտակար են նաև առօրյա կյանքում»:

Ժամեր տևած բուռն բանակցությունների արդյունքում երկու ընդդիմադիր երկրների՝ Աբրալայի և Բալկոնիայի ներկայացուցիչների միջև կրքերն այնքան թեժացան, որ ընդհանուր հայտարարի գալն արդեն անհնարին էր թվում և քննարկումները հանկարծակի դադարեցին: Բայց իրավիճակն արագորեն հանդարտվեց ԱՄՆ դեսպանի դերակատար Անուշ Պողոսյանի միջնորդելու գերազանց ունակությունների շնորհիվ, որը կարողացավ համոզել հակառակորդներին վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ և փնտրել երկարատև լուծում իրենց խնդիրներին: Տարածաշրջանում կայունություն ստեղծելու գաղափարներն ընդգրկում էին աշխատանքային խմբի ստեղծումը, որը կպաշտպաներ ազգային փոքրամասնությունների իրավունքները հորինված պետություններում, Եվրամիության կողմից առաջարկված միջոցներով աջակցություն կտրամադրեր Ակուզ գետը մաքրելու Բալկոնիայի ջանքերին, և կօժանդակեր տարասահմանային տնտեսական կապերի վերականգնմանը:

Վերջում, այնուամենայնիվ, ոչ բոլոր դեսպանները համաձայնվեցին նախնական որոշման մեջ ընդգրկված առաջարկությունների հետ, և պատվիրակները կոնսենսուսի չհասան:

Արթուր Նաջարյանը, որը կատարում էր Աբրալայի դեսպանի դերը, բացատրեց. «Չնայած մեր այսօրվա օրակարգի հարցերը հիմնականում բնապահպանական էին, ակնհայտ էր, որ հնարավոր չէ հասնել տարածաշրջանային կայունության առանց բազմակողմանի լուծման, որը ներառում է նաև տարածքային հարցերի շուրջ երկրների միջև քաղաքական լարվածությունը»:

Այս սինուլյացիայի արդյունքը սերտորեն կապված է իրականության հետ, և կարծես ծառայում է որպես հիշեցում, որ նույնիսկ լավագույն դիվանագետները ժամանակ առ ժամանակ չեն կարող հասնել համաձայնության, երբ վտանգի տակ են ազգային կարևորության հարցերը:

### **Թեմատիկ սեմինարները նախապատրաստեցին մասնակիցներին**

Մինչ համաժողովը մասնակիցների համար կազմակերպվեցին բազմակողմանի բանակցությունների և հռետորական խոսքի դասընթացներ: Գյումրիի Օրիուս կենտրոնի հետ համատեղ անցկացրած մի շարք սեմինարների ընթացքում նրանք

ծանոթացան ԵԱՀԿ-ին և շրջակա միջավայրին առնչվող մարտահրավերներին, որոնք մոդելի բանակցությունների հիմնական թեման պետք է լինեին: Ի հավելումն, յուրաքանչյուր պատվիրակ ստացավ ԵԱՀԿ մոդելի ուղեցույց, տեղեկագիրք, որը հատուկ պատրաստվել էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից: Այն պարունակում է ընդհանուր տեղեկություններ կազմակերպության մասին և խորհուրդներ, թե ինչպես կազմել ԵԱՀԿ պաշտոնական դիրքորոշումները, հայտարարությունները և որոշումները:

Մեկնաբանելով նախապատրաստական գործընթացը՝ Մարտին Գևորգյանը՝ Դակայի ներկայացուցիչը, ասաց. «Չեմ կարող ասել, որ մինչ այժմ ես խորը գիտելիքներ ունեի ԵԱՀԿ-ի մասին, բայց այս սեմինարները ինձ տվեցին հնարավորություն հասկանալ կազմակերպության էությունը: Ես ցանկանում եմ ավելի խորն ուսումնասիրել ԵԱՀԿ-ն, ինչն այժմ հեշտ կլինի այս փորձի շնորհիվ:»

### **Խանդավառ արձագանք**

Համաժողովի պաշտոնական մասը եզրափակվեց մշակութային իրադաժությամբ, որի ժամանակ յուրաքանչյուր դեսպան ներկայացնում էր «իր» երկիրը մյուս մասնակիցներին: Այն ներառում էր Ղազախստանի ասացվածքների ներկայացումը, խորհուրդներ, թե ինչպես պատրաստել ավստրիական շոկոլադե խնորեղեն, ռուսական ազգային պարի ներկայացում և այլն. սրանք ուղղակի մի քանի օրինակներ են պատվիրակների ջանքերից, որոնք ուղղված էին այս համաժողովը հաջողակ դարձնելուն:

Մասնակիցների մեծ եռանդն այս վերջին համաժողովի ընթացքում դրդեց կազմակերպիչներին ԵԱՀԿ մոդելը դարձնել կանոնավոր միջոցառում Հայաստանում: Հաջորդող միջոցառումն արդեն նախատեսվում է անցկացնել այս տարվա աշնանը Վանաձորում, որը Լոռու մարզի կենտրոնն է:

Բալկոնիայի դեսպան Անի Դավթյանն ամփոփեց մասնակիցների հիմնական տպավորությունները՝ նշելով. «Ես խորապես տպավորված եմ այն փաստով, որ երիտասարդները կարող են այդքան լրջորեն տարբեր երկրների դեսպանների դերեր խաղալ: Բանակցությունների վերջում ես մոռացել էի, որ հայ եմ, և ինձ զգում էի ինչպես բալկոնացի»:

Հեղինակ՝ Նիլս Յոհաննես

